


ՏԵՐ ԵՒ ՏԵՐՔԵՆ
Ս. ՓՈՌՈՍՍԵԱՆ

Նամակ կամ որ եւ է
զրուած իւն պէտք է ուղղել առ
Տնօրին. ԱՐՇԱԼՈՅՍ քաղաքի
ԳԱՀԻՐԷ (Եգիպտոս)

E. TOROSSIAN
Direc.- propr. du journal arménien
ARCHAËLOUICE
LE CAIRE (EGYPTE)



Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՌԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ	
Տարեկան ողջ դրամներ	60
Վեցուսեայ	35
Ս. Ա. Ր. ԵՐԿՐՈՐԵՐ	
Տարեկան	20
Վեցուսեայ	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆՈՒԿ
Եւ թղթատարի ծախքը
Խնարարութեան վրայ է :

Խնարարութեան ուղղուած
գրութիւնք եւ չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻ
Կանխիկ վճարելի են

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ա Ն Գ Ղ Ի Ա Ե Ի Ռ Ո Ւ Ս Ի Ա
Ի ՉԻՆԱՍՏԱՆ

Իստ խառնակ վիճակի մէջ է անհու-
նութեան մէջ կորսուած այն աննշմարե-
լի կէտը, զոր կը սիրենք կոչել մեր աշ-
խարհը և որուն բխալափ մի մասին հա-
մար մարդկային բերանոր կեանքեր կը
զոհուին :

Մանաւանդ երկու ինքնակոչ դերակա-
տար պետութիւններ, որոնց՝ ժողովուրդը
կիսամոկ ևս փոխ յատկանշական անունը
տուած է և որոնք իրենց ընկերակիցներէն
գէթ աւելի յայտնի կերպով կը հետամտին
տիեզերապետութեան, կարծես իբր անփո-
փոխ նշանաբան ընտրած են միշտ իրարու
ներհակ խօսիլ և գործել, և այս կերպով
խռովութիւնները միշտ վառ և սուր պա-
հել : Ընթերցողը անշուշտ հասկցաւ թէ
կ'ակնարկենք Անգղիոյ և Ռուսիոյ :

Հոս օրինակ մը :

Մէկ կողմէն Չինաստանի ընդարձակա-
ծաւալ կայսրութեան մի ամենափոքր կտու-
րին վրայ խաղաղութիւնը վերահաստատ-
ուած կը կարծուի, շնորհիւ ակամայ համա-
ձայնութեան Եւրոպական Տէրութեանց .
միւս կողմէ նոյն կայսրութեան ուրիշ մա-
սերու մէջ նորանոր նախճիրներու, արիւն-
հեղութեանց, կոտորածներու շարքեր իրա-
րու կը յաշորեն, շնորհիւ կամաւոր հա-
կառակութեան միեւնոյն Տէրութեանց : Ծայ-
րագոյն Արևելքի այդ « վայրենիներու » և
մեր « քաղաքակիրթ » դահլիճներու մէջ
խաղաղութեան բանակցութիւններու կը
ձեռնարկուի, և նոյն դահլիճներու անդամ-
ներուն մէջ իրարու գէթ թշնամութեան,
պատերազմասիրութեան միտումներ ի յայտ
կուգան : Այս նորատեսիլ ներդաշնակութեան
բուն պատճառն ուրիշ բան չէ, բայց մի-
այն գաղափարի հակառակութիւնը փիզիկ
և կիսաձուկին, որոց քով միւս Տէրութիւն-
ները գրեթէ արբանեակներու պաշտօն
միայն կը կատարեն :

Միակետական Ռուսիան, հաւանու-
թեամբ Յրանապի, Գերմանիոյ և ճարտի
կ'առաջարկէ՝ ի սէր խաղաղութեան մի քիչ
ընդլայնել այն սուրհակէն չըջանակը որուն
մէջ դաշնակից տէրութիւնները ամրափա-
կած են Երկնից Որդին « Չինաց կայսր » որ
երբ Բէքին իր մայրաքաղաքը Արևմտ-
եան « բարբարոսներուն կամ « սատանայ »
ներուն ձեռքն անցնելով « պղծելու » վտան-

գին մէջ էր, փախաւ և անհետացաւ Մայր
կայսրուհւոյն հետ :

Ռուսական դիւանագիտութեան վերո-
յիշեալ առաջարկութեան նպատակն ուրիշ
բան չ'է բայց միայն փախստական կայսեր
իւր Մայրաքաղաքը վերադարձը դիւրացնել
որպէսզի սա կարող ըլլայ մի քիչ ազատ-
րէն գործելու, և իր 400 միլիօն աւելի
կամ նուազ հլու հպատակներու հանդէպ
գէթ առ երեսս՝ վերստին ստանայ այն
ազդեցութիւնը (փոխարիտ) առանց որոյ
անկարելի է որ մի ո և է կառավարութեան
գործողութիւնները - ըլլան նոյն իսկ յո-
գուտ Հայրենեաց - յարգուին իր հպատակ-
ներու կողմէն :

Իսկ ազատական Անգղիան հակառակը
կը խորհի . նա կը պնդէ որ պէտք է՝ միշտ
ի սէր խաղաղութեան՝ աւելի ամրապնդուին
այն կապերը, որոնք արդէն անկարողու-
թեան մատնած են Չինական կառավարու-
թիւնը . որպէսզի սա՝ ճարահատած՝ հարկա-
դրուի առանց վիճաբանութեան ստորագրել
այն պայմաններն ու դաշինքը, որոնք ի-
րեն պիտի հրամայուին Տէրութեանց կող-
մէն :

Այս երկու ներհակ առաջարկութեանց
միակ նպատակակէտն է՝ ինչպէք տեսանք՝
խաղաղութեան սէրը : Արդ երկու հակընդ-
դէմ գաղափարներէն՝ եթէ երկուքն ալ
չի վիժին՝ մին միայն կրնայ նպատակա-
յարմար ըլլալ : Թէ որն է այն . պէտք է
հարեանցի ակնարկ մը նետել երկու հա-
կառակորդներու հաւանական գաղտնի մը-
տածումներու վրայ :

Չարին քաղաքականութենէն կը կար-
ծուի որ Ռուսական Տէրութիւնը գէթ եր-
կայն ժամանակի համար չ'ուզեր իր կայս-
րութիւնը ընդարձակել, ի վնաս Չինաստա-
նի : Նա կը խորհի իր արդէն ահադնատա-
րած ստացուածքը մշակել, զարգացնել,
բազմամարդել . իր տնտեսական կացութիւ-
նը բարւոքել : Ծայրագոյն Արևելքը բաւա-
կան հեռու է Արևմուտքէն, և եւրոպան
միշտ պատեհութիւն չ'ունենար զօրագուն-
դեր խրկելու այն կողմերը : Ռուսիոյ համար
անմիջական յարձակման վախ չ'կայ այդ հե-
ռաւոր աշխարհի մէջ : Արդ Չարը սիրաշա-
հելով երկնային կայսրութիւնը, և անոր
գրեթէ ամբողջութեան վրայ հսկելով իրեն
կ'ունենայ զայն, նախ իբր պատուար ընդ-
դէմ արշաւանաց ճարտի և Ամերիկայի միակ
տէրութիւններ, որոնք աւելի դիւրաւ կըր-
նան յարձակիլ Չարերու երկրին վրայ . երկ-
րորդ՝ իբր դաշնակից իր ապագայ աշխար-
հակալական խորհուրդներուն գործադրման

հանգէպ թուրքիոյ, եւրոպայի և Հնդկաս-
տանի :

Իրիտանական կառավարութիւնը, որուն
միակ քաղաքականութիւնն է վէճեր յարու-
ցանել ամեն կողմ, որպէսզի ժամանակ չը
մնայ իրեն վրայ խորհուելու, կ'ուզէ միշտ
զբաղեալ վիճակի մէջ պահել Ռուսիան օր
մը հոս, օր մը հոն . երէկ Հայաստանի պատ-
ճառաւ, այսօր Չինաստանի մէջ, վաղը
Պաղատներու մէջ . յուսալով անշուշտ որ
այս շարունակ ընդհարումներու շնորհիւ
հետզհետէ պիտի տկարանայ - ինչ որ ճիշտ
է - և վերջն ի վերջոյ իրեն քիստելու անկա-
րող պիտի գտնուի, կամ գէթ այդ վճռա-
կան ժամը պիտի ուշանայ : Արդ եթէ երկ-
նային կայսրութիւնը բռնադատուի ընդու-
նելու այնպիսի պայմաններ, զոր չ'պիտի
կրնայ գործադրել իր անհամար բնակիչնե-
րուն չ'կամէութեան պատճառաւ . օտարա-
կանները միշտ պիտի հալածուին իբր մա-
կաբոյժներ . ափսոսանքաւ « քաղաքակիրթ »
Եւրոպացիները միշտ պիտի խողխողուին,
վասնզի « վայրենի » Չինացիները կը կարծեն
թէ իրաւունք ունին իրենք զիրենք չ'թու-
նաւորելու, կրօնապարգև միսիօնարներն և
բատրէները միշտ պիտի ջարդուին, վաճառի
կապալանները դարձեալ պիտի յանդգնին
խորհելու որ զիրենք սիրոյ կրօնքի մը հը-
րաւիրող այդ երկոտանիները՝ եթէ խաբե-
բաներ չ'են՝ պէտք է նախ իրենք իրենց
մէջ համաձայնին և զիրար չ'ատեն : Այս և
ուրիշ պատճառներու համար եւրոպական
տէրութիւնները միշտ մտազբաղ, միշտ զէն
ի ձեռին պիտի հսկեն վերահաստատելու հա-
մար խաղաղութիւն մը, զոր իրենք վրդո-
ված պիտի ըլլան . մարեւու համար հրդեհ
մը, զոր իրենք արծարծած պիտի ըլլան .
Եւ վերջապէս Չինաստանը պիտի բաժնուի
իրենց մէջ, և Ռուսական կայսրութիւնը՝
Ծայրագոյն Արևելքի մէջ ալ՝ իրեն սահ-
մանակիցներ պիտի ունենայ եւրոպական
հզօր պետութիւններ, որոնք բնիտանական
կայսրութեան անդրժովեայ ստացուածոց և
գաղթականութեանց պահպանի և դռնա-
պանի պաշտօնը պիտի վարեն :

Այս միջոցով Անգղիան պիտի հաճի գոհ
ըլլալ . բայց աշխարհս ալ ո՛չ միայն խա-
ղաղութեան երես չ'պիտի տեսնէ, այլ ընդ-
հակառակն՝ ընդհանուր բաղխումի մը հաւա-
նականութիւնը պիտի աւելնայ օրըստօրէ :

Վերջին պահուն հեռագիրներէն կ'իմա-
նանք Օսման բաշայի փախուստը յԵւրոպա՝
ինչ որ զարմանալի չ'է, և Պ . Չէմպերլէյնի

համառոտ մի յայտարարութիւնը, որուն մէջ Պատուարժան տնտեսաբանութիւնը կ'ուզէ ըսել թէ . « Հայրենասիրութեան արջի քաղաքականութիւնը տեղի տալու է » : Իմաստալից և ծանրակշիւ յայտարարութիւն, որուն վերայ քանի մը խօսք պիտի խօսինք յառաջիկայ թուով :

Ա . Պ Ա Լ Ե Ա Ն
Մ Ա Թ Ի Լ Տ
(Գաղթականաց կեանքէն)
ԳԻՆ 50՝ ՍԱՆԹԻՄ

ԴԻՄԵԼ ԹԵՐԹԻՍ ԽՄԱԿԳՐԱՏՈՒՆԸ

ԱՍՏԱՐԱՆԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՆԱԿԱՆ

ՓՈՏՈՏԱԶԵԼԻՔ (սեպտեմբեր)

ԵՐԻՉՈՂԻՔ (քեֆիս , Շէրիս)

ԴԱՐՄԱՆԻՔ — Մաքուր և անուտ օդ տաքուկ արևով, յոտ մի ջուր, խնդող ու չափաւոր քուն և պարզ ու լուսնային անձրևներ և կերակուրները ամեն անգամ ինչ անտեսութիւններու ան միջակայս նախնական դարձաններն ըլլալ պարտին, ինչու որ այս քառուկ անհրաժեշտ պէտքերը կազմութեան անկիւնաքարերն են, և աստիցմով միայն հաստատուն ու տոկուն կրնանք պահել այս գեղահարաչ ու աստուածակառոյց շէնքը, և դիմացդէլ ամեն հիւանդութիւններու և Աստուծոյ պատճառով ծախարի ծնունդ տուող ուղղակի կամ անուղղակի պատճառները սպառնալու վանելու և ազդու ու անխնայ սեպուած դեղերը խնամօք և մեծ գիտելութեամբ գործածելու է :

Երբզորը արտաբերու համար երկու, երեք օր առաջ մասնագէտ անձը հիւանդը պատրաստել պարտի Այնքի երկու օրերու մէջ հիւանդը կրնայ կերակուրով անձաբար բրինձ ապուրով և սխտորով, լուրջ և պիտի ըլլալ երկրորդ օրը բրինձը թողուլ և անուտ տալ խով (բինկա պալլը) ու սրխով միայն կերակուրել : Երրորդ օրը լոկ կաթով անցնելու է : Չորրորդ աստուկ կանուխ կէս լիթր կաթով գր ի մը և ժամ մը վերջ երկրորդ անգամ 1՝ 30-32 աստիճան (Ռէօմիւր) մէկ զիտր տաք ջրով զննել քը և ջեռատածութիւն տալու է : Այս գործը թիւնէն ան միջակայս վերջ մեծ զգարութեամբ, ներքին գործարաններուն ծանօթ և արուեստին հմուտ մարձակէտ մը մարձելու է հիւանդին փորը, և որդին պարուրուած տեղը դանելով մասնաւոր շփոններով անջատելու և բաժնելու է անոր գլուխը աղիքներէն և Ազա և առանց ժամանակ կորսնցնելու, քրեզահալած դեղը մատակարարելու է : Դեղէն երկու երեք ժամ զինի մաքրողակաչ մը խմցնելու է : (Ամենէն գովելի ու անվաս մաքրողակաչը կըրիլ իւրի է - իւրի ջրոխեկ - ինկիւնը, յորմէ մինչև 50 կրամ և ալ աւելի մալ կարելի է) :

Դեղարանները ծախուած երիզահալած դեղերուն մէջ յիշուած արտաբերել կը գրկեմ Տր . Տիւնուրգոյ պալլատուութիւնը (քեֆիսի յոմ ջր Տր . Տիւնուրգո-սր գործեկ), զոր առանց մաքրողակաչի գործածել կարելի է :

Բուսո (Դուս) Եթովպոյ բարձր լեռանց վրայ կ'աճի : Մտնքը 20 կրամ ծաղիկներէն . 250 կրամ եռացեալ ջրով պատրաստուած թրջուցը (Ենֆիլգիս 2 գերազանց դարձանը նկատուած է միշտ ընդդէմ կրիզորդին և Այս պատրաստութիւնը խմելէն երկու ժամ վերջ, 30-50 կրամ հնդկի իւղ կուլ տալու է :

Օգտակար բոտոտահալած մ'է նաեւ նախնաւոր արմատին կեղեւովը շինուած դեղը մպելին որոյ պատրաստութեան կղանակը չ'տարբերիր քուսոյէն, միայն թէ ասոր քանակը 60 կրամ ըլլալու է :

Կրնանք նաեւ վատտութեամբ գործածել 0, 4-0, 8 տասնարկրամ նախնի ծծմբատ, որ չ'է այլ ինչ, բայց թէ նախնաւոր արմատէն հանուած կալաքարածեւ մարմին մը :

Ազդու երիզահալածներ նկատուած են գարձեալ դեղներին կուտերէն զատրաստուած 30-60 կրամ ձիթը, և որձ պտերին եթերաւոր իւրի ու փոշին :

Ոչ նուազ օգտակար են (30-60 կրամ) բեւեկնոյ իսկուութիւնը (60 կրամ) Եթովպիա անող մուղան ծախին փոշի վերածուած կեղեւը ո' և է հեղուկով հանդերձ . ալքոհլի մէջ լուծուած քամալա անուն ռետնային փոշին . և (32-44 կրամ) Սօարիա կոչուած Եթովպական ծառի մը չորցած պտուղին փոշին, և այլն :

Սակայն բոլոր այս դեղերը ինքնին բաւական պիտի չ'ըլլան կրիզորդին արտաբերուող դեբաքնելու, և թէ մարդ ճարտար ձեռքի մը ներքեւ չ'դառնուի, և բնական կարիքը հողացած պահուն չ'նստի ջրով լի մասնաւոր կարուրայի մը վրայ : Այս անհրաժեշտ նախադրութիւնը արդիւնով որդին պատուիր կամ վրդէն փրկելը, կը դեբաքնէ նաեւ անոր անկուծը : Առանց որդին գլուխը արտաքսելու կատարուած բոլոր փորձերը չ'եղեալ կը նկատուին, ըստ որում մարմնոյն մէջ մնացած գլուխը միշտ կարող է նոր երեզորդ մը կազմել : Ուրեմն այս որդով, և հետեւաբար, անուղղակի կերպով ուրիշ յարակից հիւանդութիւններով տառապող անձինք, առանց յապաղելու, ամեն ազդու միջոց ձեռք առնելու և խնդրել իսկապէս ուսումնասիրող ու որդին տեսակը, արտաքսելու ան միջակայս եղանակը և պայմանաւոր աշխատութիւնները դիտող անձերու միայն դիմելու են : Այսպէս կ'ընկարծուի իմ ընկերացիս Վարձագէտ և առողջաբան Տր Կ . Գ . ՈՒՉՈՒՆԵԱՆ Գահիրէ 14 Սէպտ . 1900

ՄԱՂՔԱՆԵ

Առ Օր, Մ . Մ .
Այսօր արանոյ իմ անուանդ հ sol ,
— Տիրապետ կուսիս solis և Հայ տուարի —
Մարի ,
Եւ սիրելիներդ ինձ քրիկ պաշտե
Որ քեզ ընդարձակել ընկե զաւր արի .
Մարի :
Դողմ ու ներդաշնակ — կարծես քոչուի —
Անուն մ'առնիս զի քեզ շատ յարմար է
Մարի ,
Ո՞ր աղջիկ քեզ յար արիւն մեզ ունի
Անրապատ զանկէր սիրոյ գոռարի . . .
Մարի :

Փայիկուրեան, շնորհաց վրայ հոգեկան,
Մարդիկ կա յուսածներ անցնել իմարի . . .
Մարի ,
Նորք գաղաղմներ, կիտր միտք ուր ուր կան
Բաղիսիս առնուցիկ քար ու լեռանարի ,
Մարի :

Մեկի որ շատ ծեւնեկի քեքեր զերս փետուր
Աղջիկներ առանց . . . քրուսանարի է
Մարի ,

Փայիկուրեան քարտուակ ծաղիկ երկուսուր
Մեր ս քեզ հեղիկ յոյրդ հեղանակ հանարի ,
Մարի :

Անեւ՝ միայն քանն որ քեզ կը ընդարձակ .
Վատ յոյսերուն պէս երկից կանարի ճ
Մարի ,

Թող ժպիտ քեզ Յոյս յարեկ քարտուակ ,
Եւ հոգաւոր Արեւ իսպառ չը մարի ,
Մարի :

Արտատպեալ ՄԱՍԻՍ Եւրոպայի թերթի
13 Օգոստոս 1900 ԱԼՓԱՍԼԱՆ
Պոյսաճի գիւղ

ՆԱՄԱԿ ԱՂԼԻՔԱՆԴՐԻՍՏԻՆ

ՅՕԹԻՆՍՍ ՊԱՏՐԻՍՏՐԻՆ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Անցեալ ուրբաթ օր Աղեքսանդրոյ Յուսանց Պատրիարք Յօթինոս Սրբազան Լօյտի « Հէլիոս » շոգենաւով այս տեղ ժամանեց :

Ընդ առաջ գնալու համար էլ վանկէլիզմօս եկեղեցիէն թափօր կազմուեցաւ : Թափօրին ի միջի այլոց, մասնակցեցան տեղիս ամբողջ հայ եկեղեցականութիւնը, Թաղ . Խորհրդոյ առժամայ Փոս - Ատենապետ Տիար Գրիգոր Մեղրոնեան . Աղք . Ընկերութեան Տնօրէն Ժողովոյ Ատենապետ Տիար Տօքթ . Ժամկոչեան և Թաղ . Խորհրդոյ քարտուղար Տիար Լեւոն Մկրտիչեան : Շոգենաւի գահիճին մէջ ընդունելութիւն կատարուեցաւ :

Պատր . Տեղապալը, Յուսանց Թաղ . Խորհրդոյ ներկայացուցիչը և Յոյսադաւան Սուրբազաններու պատուիրակը ճառեր խօսեցան, առաջին երկուքը Յուսանց և երկրորդը Արաբեւէն : Ս . Պատրիարքը պատասխանելով շնորհակալութիւն յայտնեց : Կատարուեցան կողմէ բարի գալուստ մաղթելու համար շոգենաւ եկած էր Վսեմ . Փոս-Կատարելը . Նոյնպէս շոգենաւ եկաւ Յուսանց Ընդ . Հիւսպատոսի փոխարդ Պ . Պէնյանիս :

Շոգենաւէն թափօր կազմուեցաւ որ քաղաքին գլխաւոր փողոցներէն անցնելով հասաւ էլ վանկէլիզմօս եկեղեցին . ուր կ'սպասէին արդէն ֆրեկատտները և մասնաւոր հրաւիրեալք :

Յոյն եկեղեցականը զգետաւորեալ, Պատրիարքը Պրոնտիան իշխանութիւնը տունին Յօթինոս Սրբազանին և աղօթքներ կատարեցին յետ որոյ նոր Պատրիարքը իր աթոռը բազմելով երկար ճառ մը արքայապետին օրուն պատասխանեց Բնակիչիս Արքեպիստրիտը աւելի երկար ճառով մը :

Արարողութիւնը այս կերպով աւարտելով Պ . Պրոնտիան Պատրիարքին ներկայացուց հիւսպատական մարմինը . որմէ յետոյ վերստին թճափոր կազմուեցով, ուղղուեցաւ յուսանց Պատրիարքարանը ուր ներկայք Պատրիարքին աջը համբուրեցին և պատուասիրուեցան ճոխ պիւֆէով մը :

Փողոցները լեցուն էին յոգնախուռն բողմութեամբ :

Նորընտիր Պատրիարքը սկսած է արդէն իր պատանական այցելութիւնները :

Արդէն իսկ ներկայացաւ Բ . Խալիկին և այցելեց նախարարներուն :

ԻԴՆԱՏՐՈՍ Կ . ՍԱՐԱՑԵԱՆ

ԴԵՐՁԱԿ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

Շարա Պայ - Էլ - Հասիս Թիւ 22

Կը յայտարարէ թէ՛ քանի տարիներէ ի վեր, հանրածանօթ Անգղիացի վաճառական - գերձակ ԺՕՆ ԲՕԼԱՔՕԹԻ նման կարեւոր տան մը մէջ աշխատելով՝ արհեստին ամեն նրբութիւններուն կատարելապէս հմուտ և փորձառու, այս անգամ հաստատուած է հանգուցեալ Եուզար Փաշայի Տայրթին դիմացը, նորաշէն խանութիւնը ունի մէջ :

Թէ՛ իրեն դիմող երկու սեռէ Պատ . յաճախողքը ըստ ամենայնի գոհ պիտի մնան, արհեստի նրբութիւն տեսնելով, նորաձեւութեանց զանազանութիւնները դանելով, և մանաւանդ՝ որ ամենէն կարեւորն է, չափաւոր վճարումներու փոխան, ձեւաւոր և ճաշակաւոր զգեստներ ունենալով :

Արտատպեալ ՄԱՍԻՍ Եւրոպայի թերթի
13 Օգոստոս 1900 ԱԼՓԱՍԼԱՆ
Պոյսաճի գիւղ

ՆԱԾԱԿ ԳԱՀԻՐԷԷՆ

Տիար Ա. Զարեհեանի հետեւեալ գրութիւնը կը հրատարակենք յանուն անկողմնակալութեան :

ՃԵՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՁԱՅՆԸ

Իբրեւ սոսկ ունկնդիր մը, ներկայ գտնուելով Հայ Լսարան-Ընթերցատուն ընկերութեան Ընդհ. Ժողովոյ (1) վերջին երեք նիստերին եւ իրազեկ՝ բոլոր իրադարձութիւններին որոնց նստեանքն է այսօրուայ անկերպարան վիճակը . իբրեւ պարզ անհատ մը որ ջերմապէս կը փափաքի միշտ բարձր տեսնել ընկերութիւնը . ճշմարտասիրութիւնէ միայն մղուած ինքզինքս պարտական կ'զգամ ներկայ հրաւերը ուղղուած ճշմարտութեան բոլոր բարեկամներուն, ամեն անոնց որոնք զերծ են կանխակալ կարծիքներէ եւ անկախ՝ իրենց դատողութեան մէջ :

Մով թի ու ստորակուսի ներքեւ ոչինչ թողելու, իրականութիւնն իր իսկութեամբ պարզելու եւ արդարութիւնը լիութի գործադրելու որոշ նպատակաւ, կ'առաջարկեմ որ անյայտ կազմուի ընկերական պատուոյ ատեան մը, « Նոր Օր » ի թիւ 34 ի մէջ երեւցած յօդուածին առթիւ, ուր նոյն թերթի խմբագրապետ Պ. Ս. Բիւրատի անձին ու պատուոյ դէմ ուղղուած են ամբաստանութիւններ :

Ամեն անկեղծ հոյի նուիրական պարտքն է չի մնալ անտարբեր այսպիսի տղեղ երեւոյթի մը հանդէպ որ սերտիւ կ'ազդուած է գուտ ժողովրդական ընկերութեան մը — ինչպէս եւ Լսարան Ընթերցատանը — կենսական շահերուն հետ :

Թող կազմուի ատեան մը ուր խղճմտորէն ու անաչառապէս քննութեան ենթարկուին բոլոր գործերը, թող մէջ բերուին փաստերը, եւ ժողովուրդը, որ իր բազմակողմանի գոհաբերութիւններով հանդերձ տուժողն ինք կ'ըլլայ յաճախ այս կարգի պարագաներում, իրաւունք ունենայ միանգամ ընդմիշտ վերահասու ըլլալու ճշմարտութեանց բան մը թող չի մնայ վարագուրի սակ :

Այս է փափաքը ժողովրդի մէկ զաւակին որ ապրած է ու կ'ապրի միշտ անկախ ու անբասիր կեանքը, եւ որ ամեն նկատումանք վեր կը դասէ ժողովուրդին իրաւունքը :

Ես կը հաւատամ թէ ոչ ոք պիտի հաւանի առանց բանաւոր փաստերի, ինչպէ տեսնել իր մէկ անգամ որ հասարակական կեանք մը ունեցած է. ու մեր մէջ շատ է գոթադարձար այս կարգի գործերը թիւր : Ուստի ճշմարտութիւնն իր բնիկ փայլով երեւայէ եւ իր վճիռն արձակելէ վերջ մենք ալ աւելի քան անողոք դառնանք մեր գաղափարներու պարսկականութեան մէջ . իսկ հակառակ դէպքերում, երբ անհետեւանք կը մնայ իմ այս հրաւեր, խեղճուած կը նկատեմ ճշմարտութեան ձայնը :

Ա. ՁԱՐԵՀԵԱՆ

Գահիրէ 5 Հոկտ. 1900

ՀՆՈՒՍԳՐԱԿԱՆ ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ

— Ընդհանուր քաղաքականութեան մը բարեփոխում չ'են աւետեր վերջին հեռագիրները : Անգղիա խիստ զբաղուած է իր ընտրութիւններով, եւ իր ապագայ մեծութիւնը կամ անկումը պիտի պարտի այս միջանի օրուան գործողութեան : Գերմանիոյ կայսրը հեռագրով կը հրաւիրէ չինաց կայսրը ի Բէքին, ուր « իր աստիճանին վայել ընդունելութիւն պիտի գտնէ սպարապետ

(1) Նախորդ Գործ. Ժողովոյ սարքած անկանոն նիստերուն կ'ակնարկէ անշուշտ յարգոյ յօդուածագիրը :

Մ. Խ.

Վալտերսի կողմէն » : Միեւնոյն ժամանակ Կիլեօմ Բ. որ չինացի եզեռնագործներուն Եւրոպական պետութեանց յանձնուելը պնդած էր նախապէս, հիմա կը բաւականապէս անոնց պատժուելովը չինական կառավարութեան կողմէն : Հարաւ — Սփրիկէի մէջ հակառակ Լորտ Ռոպերթսի յայտարարութեանց եւ սպառնալեաց՝ Պօէրները կը շարունակեն իրենց յուսահատ դիմադրութիւնը, եւ քան զեւս անմոռաց տիպարներ հանդիսանալով ազատասէրներու :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

— 0 —

— Ժողովայ սիւ Գեռ քանի մ'օրէ ի վեր դառնապէս կը գանգատի Աղեքսանդրիոյ մաքսատան գէմ, զայն յորջորջելով քրիստոսեան մաքսատան : Մեր պաշտօնակցին յայտարարութեանց նայելով այդ մաքսատան մէջ ալ սկսած են միեւնոյն անկարգութիւնները, միեւնոյն կամայականութիւնները որոնցմով իրաւամբ կը պարծին Տաճկաստանի մաքսատունները :

— Գրէտի Լէոնէ գրամատունը կը հաղորդէ որ, եթէ սխալ չի կայ հասած հեռագրոյն մէջ՝ Բուսէլի երկաթուղոյն մեծ պարզերը շահող թիւն է 604 447 :

— Տեղական թերթերէն առնելով, մեր ունեցած թիւերէն մէկուն մէջ գրած էինք թէ Շարիի ի նաւազը անկարգութիւններ գործած էր փոթորկի ժամանակ, այս անգամ միեւնոյն թերթերը կը հերքեն այդ լուրը եւ մենք ալ անոնց կը ձայնակցինք մեծ ուրախութեամբ :

Ըստ Էնիսպրնէ Կարգի Բ. Գուռը իրաւունքի յաւելում մը կը պահանջէ այն շրջանաւորներու եւ աստիճաններու վրայ, զոր վերջերս պարգեւեց եգիպտական պաշտօնեայններուն : Խտիվին կառավարութիւնը ընդունեց այս յաւելումը, որ կը հասնի 16-800 զրշ . ի, եւ ինքզինքն որ այդ գումարը զեղուի 7000 եգիպտական ոսկւոյ գումարէն, զոր թուրք կառավարութիւնը շատոնց կը պարտի եգիպտական կառավարութեան Սուէզի շրանքէն անցած թուրք նաւերուն նորոգման եւ ածուխի իրը ծախս եւ գին : Սակայն Բ. Գուռը աչքէն վրիպեցուց յիշեալ 7000 ոսկւոյ գումարը յիշեցող պարբերութիւնը, եւ դարձեալ ստիպողաբար պահանջեց 16800 զրշ . ը, սպառնալով միանգամայն որ շրանաւորներուն եւ աստիճաններու Պիրաքները չ'պիտի խրկէ, եթէ նախապէս չ'զանձէ վերոյիշեալ գումարը :

Բ. Գրան այս ընթացքը բաւական զարմացուց, կ'ըսուի, եգիպտական կառավարութիւնը :

— Քաղաքիւ Հրէայնները շուրջ 1200 ոսկի ծախսելով նոր Սինակոկա մը կառուցանելու ձեռնարկած են Իսմայիլիէյի թաղին մէջ : Այս նոր շէնքը Սողոմոնի տաճարին ճիշտ մանրանկարը պիտի ըլլայ :

— Անկլո-Սուլտանական կառավարութիւնը նոր գաւառ-Վոսսալ մը պիտի հանէ քիչ ատենէն : Այժմեայ գաւառ-Վոսսալը եգիպտականին է, « Սուտան » կրկնագրութեամբ :

— Էջ-Էպչակ-Էջ-Ասապի անուն եգիպտական ընկերութիւնը այս իրիկուն ներկայացում մը պիտի տայ յԱղեքսանդրիա Չիլիմա թատրոնին մէջ, ի նպաստ Շարքիէ շոգեհաւին զոհերու այրիներուն : Ն. Վ. կառավարիչը իր հովանաւորութեան տակ առած է այս մարգարական գործը :

Երեկ ժամը 10 1 (2 ին Բաղաքս ժամանց Յունաց Ամենապատիւ Փօթինոս Ս. Պատրիարք :

Դիմաւորելու գնացած էին քաղաքիս մէջ գտնուող Յոյն երեւելիները, Յունական Հիւպատոսարանի մարմինը, ինչպէս նաեւ մեն ազգի ներկայացուցիչները :

Ազգ. առաջնորդարանն ալ իւր մասնաւոր ներկայացուցիչներն ունէր : ԱՐԺ. ՏԻՐ ԵՂՆԻԿ ՔԱՀԱՆԱՅ ՊԱՆՈՒՆԻ որ կը մասնակցէր Հայ պատգամաւորութեան՝ Յունաց առաջնորդարանի ընդունելութեան սրահին մէջ թուրքերէն լեզուաւ համառօտ բանախօսութիւն մը ըրաւ, Գահիրէի Հայ գաղութին կողմէ բարի գալուստ մաղթելով նորընտիր Ամեն. Ս. Պատրիարք հօր :

Փօթինոս Պատրիարք Յունարէն լեզուաւ իւր խորին շնորհակալութիւնները յայտնեց Գահիրէի Հայ գաղութին կողմէ իրեն ընծայուած մեծարանաց :

Նորին Սրբազնութեան Փօթինոս Պատրիարքի յունարէն լեզուաւ պատասխանելը՝ կրնանք նկատել յորդոր մը հայ պատգամաւորութեան թէ՛ « յարգեցէ՛ք ձեր Ազգային լեզուն » :

ԼՈՒՍԻՆԱՆՔ. — Մէլիք. Ս. Գաւիթ Բէկի հրատարակած ԼՈՒՍԻՆԱՆՔ անուն գրքէն, որ ինչպէս ծանուցած էինք 400 կտոր Արաբկիրի որբերուն նուիրուած էր հեղինակին կողմէ, այս անգամ յիշեալ գրքերը աճողովին զրկուած է Գահիրէի Հայոց Որբասիրաց ընկերութեան » եւ կը վաճառուի ի գին 10 դահեկան ողջի :

Բնականաբար մեր ազնիւ ազգայինք պիտի փափաքին ունենալ սոյն հեղինակութեան, երկու պատճառներով. նախ՝ սատարելու համար Որբասիրական ձեռնարկին. երկրորդ՝ ունենալու համար հեղինակութիւն մը՝ որ խիստ շահեկան եւ միանգամայն կարի հետաքրքրական է :

Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

ՆՈՐ ՍԻՔԼՕՆ ՄԸ. — Թէքսասի վերջին սիքլօնը 4078 մահ պատճառեց (ըստ վերջին տեղեկութեանց) միայն Կալիֆօրնի քաղաքին մէջ :

Բոլորովին կործաներ է եղեր Հայլէնտսը, ծովային բազնիքի կայան, ճըֆէրսնի Հարւ. Արեւմուտքը եւ Կալիֆօրնի Հարաւակողմը, Մէքսիքայի ծոցին վրայ կը գտնուի :

Հազար տունէն մէկն ալ ազատած չէ, աղէտքի պահուն քաղաքը լողացողներով լի էր, օգնութեան փութացող նաւակները փլատակներու տակ 4000 է աւելի դիակներ գտան ըստ Ռիւթէրի հեռագրին. իսկ ըստ Հաւասի 400 :

Դիտելի է որ այս գործակալութեանց առաջինը, աղէտին տեղին համար Հայլէնտս կ'ըսէ մինչդեռ միւսը Հայ Այլէնտ կ'ըսէ :

Տեղի-Մէյը կ'ըսէ թէ այս աղէտքին հաստատումը դեռ ընդունած չէ իր նիւսօրքի թղթակցէն ուր դեռ կ'անդիտանային գուժը, որովհետեւ սա թալլասի ճամբով եկած է :

Ըստ Մօրնիլ-Լիքըր ի հայիւններուն, Հարաւ. Ափրիկեան պատերազմը մինչև Սեպտ. վերջ, անգղիոյ արծած պիտի ըլլայ 74 միլիօն ոսկիի, եւ կորուստները 40000 ի :

— Կ. Պոլսէն կ'իմացնեն որ Մատրիտի թրքական դեսպան Նէճիպ Բաշա իր ամսականները չ'կրնալով առնել, հրաժարած է :

ԱՂԱՄԱՆԴԱԿՈՒՆԵՐԸ . — Կալկաթայի դատարանը առաջին անգամ Ռէժիսթիկէնի ճառագայթները գործածած է մարդու մը մարմինը մէջ պահուած առարկան գտնելու համար , բայց արդիւնքը շատ ողորմելի եղած է :

Փորձին ենթական մարդ մը է որ ամբաստանուած է Կալկաթայի գոհարավաճառներէն մէկուն ցուցափեղկէն 8000 Ռուբինոց այսինքն 13000 Ֆրանքնոց , աղամանդ մը գողցած և կըլլած ըլլալու յանցանքով :

Պէտք է ըսել որ պատահաբար շատ հազուադէպ չէ Հնդկաստանի մէջ և գողի վարժարաններուն մէջ (որովհետև գողութեան վարժարան ալ կը գտնուի Հնդկաստանի մէջ) արուեստավարժներուն առանց դժուարութեան աղամանդ կըլլու կերպը և զանոնք իրենց կոկորդին մէկ խորշին մէջ պահելու և ապա զանոնք ժամանակին դուրս հանելու կերպը կը սորվեցնեն :

Կալկաթայի մէկ օրաթերթը կը նկարագրէ այդ արդիւնքը ստանալու մէթօար :

« Ամենէն առաջ արուեստավարժին կաշի կտոր մը կըլլեցնել կուտան որուն առասան մը կապուած է . աշկերտը կը վարժուի դիւրութեամբ այդ կաշին կըլլու և զայն իր խոչափողին մէջ զետեղելու :

Երբոր կրնայ ալ այդ գործողութիւնը կատարել և իր լեղուն միջոցաւ ալ կրնայ կաշին հանել , զայն կրով կը ծեփեն որն որ խոչափողին խոռոչը կը մաշեցնէ և կը մեծցընէ , քիչ մը գործնականով և քիչ մ'ալ սովորութիւնով Հնդիկ գողը կը կարենայ մէկ անգամէն 8-10 Ռուբի կըլլու :

ՀՆԷՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Table with 6 columns: 1900, 1901, 1902, 1903, 1904, 1905. Rows of numbers representing statistics.

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Ձ Դ

Նոր Կեանքի Ի Ե Անահիտ Ի Անթերի մի հաւաքածոյն ունենալ փափաքողք առիթը ձեռքէ չ'փակցնելով փութով Խմբագրատունս դիմեն , դիւրագին զայնս գնելու :

ՀԱՒԱՔԱԾՈՅ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ՏՆՕՐԷՆ Լ . ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՁ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտներու աշակցութեամբ եռամսյն և քառամսյն պատրաստուած սոյն հաւաքածոյն գնել փափաքողներն կամ բաժանորդագրուիլ ուղղորդեն , կրնան դիմել Արշալոյսի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօրէնին :

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

«ԱՐՇԱԼՈՅՍ»

Հիմնուել 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻՒԼ ԱԶԻԶԻ ՍԿԻՉԲԸ

Օտանկի դեղատանին դիւրացի փողոցին մեջ .

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ , մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ , կ'ընդունուին .

Այցեխարտեր , Երջարեւակներ , Գիրքեր , Հրաւիրագրեր , Մանկադրոշմներ , Կանոնագիրներ , Տոմար և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ :

Ամենակատարեալ ճշգրտագնութիւն և չափաւոր դին :

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻԿ ԵՆ :

Գ Ա Ֆ Ե Ե Փ Ր Ա Տ

ԱՊՏԻՆ — ՊԱՊ — ԷԼ — ՊՕՍԹԱՆ

Պաշտիւն եւ Նուագածուաց խմբի Զօրանոցին ձիւց դիւրացը

ՕՂԱՆԵՍՍ ՍԻՄՈՆԵԱՆ . ԵՒ ԴԱՆԵՂԼ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ ԸՆԿ .

Պատիւ ունին ծանուցանել Արգոյ ազգայնոց թէ՛ հանգստի ժամերն առողջարար օդ ծծելով զուարճանալու և զովարար ըմպելիներով յոգնած մտքերը կազդուրելու համար , կրնան դիմել ԵՓՐԱՏ ՍՐՃԱՐԱՆԸ , որ վերոյիշեալ Ընկերութիւնը ամենամեծ հոգածութեամբ և խնամով զարդարած և յաճախորդաց հանգիստը ինկատի ունենալով պատշաճագոյն վիճակի մը մէջ դըրած է :

ԳՍՁԷ ԵՓՐԱՏ Ի մէջ կը մեծարուին զովարար ըմպելեաց ամենամաքուրները . ընտիր և թարմ օշարակներ , անխարգախ սուրճ և անխառն կաթ :

Մասնաւոր խնամքով կը պատրաստուի նաև մրգաթան և չամչարակ (խոշաղ) :

Հոն գիմոյ յաճախորդք գոհ պիտի մնան , գտնելով մաքուրութիւն , ճաշակաւոր սպաս և անթերի ծառայութիւն , ամենէն խստապահանջները գոհացնելու աստիճան :

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՂԵՒԱՌԵԱԼ ԳՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինպատիւրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ այնպէս ուրիշ օր և է ընդունութենէ մէկ միլիար աւելի է :

Ս . ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ԵՐԱՅԻՐԷ

ՄԻՄՆԱԲ ԵՐԷԷ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅՑԻ

Քանի որ Սիւլվաճեան վաճառատան մէջ (Ի Մուքի) պիտի գտնէք միմիայն 22 ՂՐՇ Ի նիքէլ , կոթէն լարուղ սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է : Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂՐՇ է սկսեալ մինչև 2500 ՂՐՇ : Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ , նիքէլ , և օքսիտէ ժամացոյցներ . պատի և քօնսօլի բազմազան Բանտի լներ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք :

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան Պօղօկրաֆներու :

Ա Ձ Դ

Քղիի Օրօր գիւղի Ազգայիններէն Տիար Մարտիրոս Ծանօսանի որդի Պ . Կարապետ Ծանօսան 26 ամեայ Երիտասարդը Հայալինջ գէպերէն ի վեր անհետացած է և իւր Գահիրէաբնակ ազգականները կ'ուզեն գիտնալ թէ ո՞ր կը գտնուի այդ Երիտասարդը :

Կը խնդրուի ուրեմն մեր Պատ . Ազգայիններէն որ եթէ գիտեն յիշեալ Երիտասարդին ուր գտնուիլը կամ եթէ ո՛ր և է տեղեկութիւն ունին անոր մասին , բարեհաճին ծանուցանել Արշալոյսի Տնօրինութեան :

Նոյնպէս կը խնդրուի մեր Արտասահմանի Պատուարժան պաշտօնակիցներէն , որ չնորհ ընեն ներկայ ազդարարութիւնը կրկնել իրենց թերթերուն մէջ . ի հարկին նըմանօրինակ ծառայութիւններ սպասելով մեզմէ :

ՀԱՅ ՃԱՇԱՐԱՆ ՄԻՋՐԱՆ ԵՂԱՐԻՔ ԳԱԶԱՆՃԵԱՆ ՇԱՐԻԱ ԱՊՈՒ — ՍԱՊԱՀ

Նեով . Իւնիպիտակ Դեղատանին դիւրացը

Որ և է կերակուր ախորժահամ և սընընդարար ըլլալու համար պէտք է , մսի , իւղի , բանջարեղինաց լաւագոյն տեսակը ընտրել . այն համոզմամբ որ մնդարար կերակուրը ստամոքսին կենսատուն է , ով որ ստամոքսին յարմար կերակուր չ'ընտրեր ախորժակին թշնամանանք կ'ընէ :

Իրենց կենաց բարեկամ եղողներն կը հրաւերենք յաճախել մեր վերոյիշեալ ճաշարանը , վստահ ըլլալով թէ՛ գոհութեամբ պիտի մեկնին :

Գիներն ԳԻՒՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՆ :

Այնպէս մէջ գտնուող ուրիշ օր և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ , ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրիւնը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործակատար յ'Ազգ. քառնդիւրա .